

**ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ  
Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում  
քաղաքական մշակույթի առանձնահատկությունները.  
Հայաստանի դեպքը**

**ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

*Երևանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան*

**ՆԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Երևանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան,  
Հալլեի համալսարան, Գերմանիա*

Հոդվածում, օգտագործելով հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում Հայաստանում հեղինակավոր կազմակերպությունների իրականացրած սոցիոլոգիական հարցումների տվյալները, քննարկվում է դրանց միջոցով որոշ քաղաքական գործընթացների կանխատեսման հնարավորությունը: Այդ տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում կարելի է արձանագրել քաղաքական մշակույթի էական փոփոխությունների երեք փուլեր, որոնք համընկնում են առաջին երեք նախագահների պաշտոնավարման ժամանակաշրջանների հետ: Ընդ որում, առաջին և երրորդ փուլերում անվստահությունն իշխանության բարձրագույն մարմինների նկատմամբ այնքան է խորացել, որ հանգեցրել է ոչ սահմանադրական մեխանիզմների կիրառմամբ իշխանափոխության (հեղափոխության): Հատկանշական է, որ թեև երկրորդ նախագահի պաշտոնավարման ժամանակահատվածը բարենպաստ էր «գունավոր հեղափոխությունների» համար, սակայն նախորդող և հաջորդող երկու փուլերի համեմատ վստահության զգալի տարբերության շնորհիվ Հայաստանում նման բան տեղի չունեցավ: Վերլուծությունը վկայում է, որ թեև հետխորհրդային տրանսֆորմացիան երեք տասնամյակից էլ պակաս տևողություն ունի և խորհրդային տարիներին չէր կարող խոսք լինել քաղաքական մշակույթի առկայության մասին, սակայն այն ստատիկ բնույթ չունի, ինչպես երբեմն համարվում է: Միաժամանակ, արդյունքները ցույց են տալիս, որ թեև հասարակության վստահությունը որոշ շրջաններում կտրուկ փոփոխություններ է ունեցել, սակայն հասարակական գիտակցության փոփոխություններ այդ ժամանակահատվածում բավական դանդաղ են տեղի ունենում:

### Բանալի բառեր

Քաղաքական մշակույթ, հետխորհրդային տրանսֆորմացիա, հեղափոխություն, իշխանություն, կուսակցություններ

### Նախաբան

Հետխորհրդային տրանսֆորմացիայի եզակիությամբ և չափազանց բարդ բնույթով է պայմանավորված այն հանգամանքը, որ թեև այդ գործընթացը շարունակվում է գրեթե 30 տարի, սակայն մի շարք դրսևորումներ դեռևս չեն ստացել տեսական լիարժեք հիմնավորումներ ու մեկնաբանություններ: Ընդ որում, որոշ դեպքերում դա վերաբերում է այնպիսի երևույթների, ինչպիսիք են, օրինակ, հեղափոխությունները (այս հոդվածում որպես այդպիսին են դիտարկվում ոչ սահմանադրական մեխանիզմներով տեղի ունեցած իշխանափոխությունները): 2003-2005թթ. տեղի ունեցած նման իրադարձությունները ստացան «գունավոր հեղափոխություններ»<sup>1</sup> անվանումը, որոնք ունեին մի շարք ընդհանուր հատկանիշներ՝ ակնհայտ արտաքին միջամտություն նույն աղբյուրից, հետընտրական գործընթացների հաջորդում, երիտասարդական շարժումների պարտադիր առկայություն, ներիշխանական պառակտումներ և այլն:<sup>2</sup> Դրանց ուսումնասիրությունը հիմնականում կենտրոնացած էր մի քանի հարցադրումների պատասխանների որոնման շուրջ՝ արդյոք ունե՞ն ընդհանուր բնույթ և արտաքին ծագում, այդ երկրների ներքին և արտաքին քաղաքական դիրքորոշումներում ի՞նչ փոփոխություններ են լինելու, արդյո՞ք դրանք հետխորհրդային տարածքում ծավալված աշխարհաքաղաքական մրցակցության դրսևորումներ են և ի՞նչ հետևանք են ունենալու այդ մրցակցության վրա և այլն: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այդ հեղափոխությունները միայն հետընտրական գործընթացներ չեն և «գունավոր հեղափոխությունների» համեմատ ունեն որոշ այլ տարբերություններ ևս: Դրանք նաև նոր հարցադրումներ են

<sup>1</sup> **Lincoln A. Mitchell**, *The Colour Revolutions*, University of Pennsylvania Press, 2012.

<sup>2</sup> **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.**, Ուր են տանում «գունավոր հեղափոխությունների» ճամփաները, *Հանրային կառավարում*, 2005,3, էջ 90-101:

առաջացնում, որոնցից ամենակարևորը, թերևս, հետևյալն է. կա՞ն արդյոք ներքաղաքական նախադրյալներ, որոնց դեպքում տեղի է ունենում նման իշխանափոխություն (հեղափոխություն), և, եթե այո, ապա որո՞նք են դրանք: Անկախ այլ գործոններից, իշխանափոխությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ առաջանում է խզում իշխանության և հասարակության ակտիվ հատվածի միջև: Ակնհայտ է, որ դա կախված է երկու հիմնական գործոններից՝ իշխանությունների գործունեության արդյունքներ և հասարակության վերաբերմունք իշխանությունների նկատմամբ: Հատկանշական է, որ այդ գործոնները տարաբնույթ են: Եթե առաջինը բավական օբյեկտիվ է և չափելի, ապա երկրորդի դեպքում որոշիչ է վստահության բաղադրիչը, որն ունի նաև սուբյեկտիվ բնույթ, քանի որ պայմանավորված է ոչ միայն չափելի մեծություններով (սոցիալական և տնտեսական ցուցանիշներ), այլև քաղաքական մշակույթով: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ իշխանության ու հասարակության ակտիվ հատվածի խզումը՝ հեղափոխությունը, կարող է բնորոշվել այդ գործոններով: Հռոլվածում փորձ է արվում պարզել և գնահատել քաղաքական մշակույթի ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում հեղափոխական գործընթացների վրա: Դիտարկվում է Հայաստանի դեպքը:

Քաղաքական մշակույթի և տրանսֆորմացիայի գործընթացների հետազոտությամբ զբաղվող մասնագետների կարծիքով քաղաքական համակարգի կայունությունը հնարավոր է այն դեպքում, եթե մարդիկ ժողովրդավարական խաղի կանոններով աջակցում են գործող ինստիտուտներին<sup>3</sup>: Այդ աջակցության առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով 90-ական թվականներից սկսած քաղաքական մշակույթը ներառվեց տրանսֆորմացիայի ուսումնասիրություններում, որոնք, սակայն, որպես կանոն, սահմանափակվեցին միայն հետկոմունիստական Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական մշակույթի փոփոխություններով: Նախկին խորհրդային հանրապետությունները մասամբ (Ռուսաստան, Բելա-ռուս, Ուկրաինա, Մոլդովա, Հարավային

<sup>3</sup> **Pollack Detlef, Jacobs Jörg, Müller Olaf, Pickel Gert**, Introduction, *Pollack et al., Political Culture in Post-Communist Europe. Attitudes in new democracies, Burlington 2003*, p. xiv.

Կովկասի) կամ ամբողջությամբ (Ղազախստան և Միջին Ասիայի պետություններ) դուրս մնացին փորձառու և վստահություն վայելող ընկերությունների («World Values Survey»<sup>4</sup> կամ «European Value Study»<sup>5</sup>) սոցիոլոգիական ուսումնասիրություններից, որոնց վրա են հաճախ հիմնվում ակադեմիական հետազոտությունները: Այդուհանդերձ, տարածաշրջանային մասնագիտացված կառույցներից մեկը՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրը, ապահովում է 2004-2017թթ. տվյալներ, որոնց վերլուծությունը 1997թ. վերաբերյալ վերոհիշյալ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների տվյալների համադրմամբ հնարավորություն է տալիս գնահատել Հայաստանում քաղաքական մշակույթի ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացի վրա:

### **Քաղաքական մշակույթի տեղը քաղաքագիտական ուսումնասիրություններում**

Ըստ Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի, քաղաքական մշակույթի դասական սահմանումը հիմնվում է «քաղաքացիների որոշակի քաղաքական կողմնորոշումների՝ քաղաքական համակարգի և դրա տարբեր ոլորտների նկատմամբ նրանց դիրքորոշումների, ինչպես նաև այդ համակարգում իրենց դերի վրա»<sup>6</sup>: Նրանց համատեղ աշխատանքը նվիրված էր արևմտյան ժողովրդավարության հինգ դեպքերի ուսումնասիրությանը, որի հիմնական հետևություններից մեկն այն էր, որ ժողովրդավարական քաղաքական համակարգի երկարատև կայունությունը խիստ կապված է հասարակության շրջանում դրա ընկալման հետ: Դա նշանակում է, որ երբ քաղաքացիները ընդունում են ժողովրդավարության հիմնական սկզբունքները և կանոնները, ապա ժողովրդավարության երկար

<sup>4</sup> Armenia 1997,

<http://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV3.jsp>

Հայաստանում սոցիալաբանություններն իրականացվել են 1997թ.:

<sup>5</sup> Public Opinion analysis - Central and Eastern Eurobarometer archives

Հայաստանում սոցիալաբանություններն իրականացվել են 1993-1997թթ.:

<sup>6</sup> **Almond Gabriel, Verba Sidney**, The Civic Culture: Political Attitudes in Five Western Democracies, Princeton, NJ 1963, p. 12.

կայունությունն ապահովված է<sup>7</sup>: Այդ պատճառով գաղափարը նեղ ընկալում ունեցավ և դարձավ քննադատության թիրախ: Անգամ երբեմն հարցականի տակ էր դրվում առհասարակ հայեցակարգի «իմաստը և անիմաստությունը»<sup>8</sup>: Ամենահաճախ հնչող քննադատությունն այն էր, որ «քաղաքական մշակույթ» հասկացությունը մակերեսային երևույթներ է դիտարկում, որոնք կարճ ժամանակահատվածում փոփոխվում են և ի վիճակի չեն ինչ-որ բան բացատրել<sup>9</sup>: Հարցադրում էր ներկայացվում նաև, թե ինչ կապ ունեն քաղաքական դիրքորոշումները և քաղաքական վարքագիծը իրար հետ կամ ինչպես կարելի է քաղաքական կողմնորոշումները էմպիրիկ կերպով ներկայացնել<sup>10</sup>: Օ. Գաբրիելի կարծիքով տվյալների պակասի պատճառով անիրատեսական է ուսումնասիրել քաղաքական մշակույթի ազդեցությունը քաղաքական համակարգի կայունության և գործունեության վրա<sup>11</sup>, քանի որ սկզբունքորեն քաղաքական մշակույթը անգլո-ամերիկյան ժողովրդավարության դրսևորում է, հետևաբար ավելի շուտ նախատեսված է կայացած ժողովրդավարությունների ուսումնասիրման համար: Նման պնդումներին Գ. Ալմոնդը հակադարձում էր. «Քաղաքական մշակույթը չպետք է ընկալել որպես միակ բացատրություն քաղաքական կառույցների գործունեության արդյունավետության վերաբերյալ: Ավելի շուտ խնդիրը վերաբերում է ինստիտուտների և կողմնորոշումների փոխադարձ ազդեցությանը»<sup>12</sup>:

<sup>7</sup> **Pickel Susanne, Pickel Gert**, Politische Kultur- und Demokratieforschung. Grundbegriffe, Theorien, Methoden. Eine Einführung, Wiesbaden 2006, S. 51.

<sup>8</sup> **Kaase Max**, Sinn oder Unsinn des Konzepts „Politische Kultur“ für die vergleichende Politikforschung, oder auch: Der Versuch, einen Pudding an die Wand zu nageln, *Max Kaase, Hans-Dieter Klingemann (Hrsg.), Wahlen und politisches System. Analysen aus Anlaß der Bundestagswahl 1980, Opladen 1983.*

<sup>9</sup> **Westle Bettina**, Rezeptionsgeschichte des Konzepts der Politischen Kultur, *Bettina Westle, Oscar W. Gabriel (Hrsg.), Politische Kultur. Eine Einführung, Baden-Baden 2009, S. 29.*

<sup>10</sup> **Pickel Susanne, Pickel Gert**, Politische Kultur- und Demokratieforschung. Grundbegriffe, Theorien, Methoden. Eine Einführung, Wiesbaden 2006, S. 19.

<sup>11</sup> **Gabriel Oscar W.**, Politische Kultur aus der Sicht der empirischen Sozialforschung, *Oskar Niedermayer, Klaus von Beyme (Hrsg.), Politische Kultur in Ost- und Westdeutschland, Berlin 1994, S. 24.*

<sup>12</sup> **Almond Gabriel**, The Study of Political Culture, *Almond Gabriel, Discipline Divided. Schools and Sects in Political Science, Thousand Oaks 1990, pp. 138-169.*

Բիարկե, սոցիալարցումները ոչ միշտ ունեն բարձր հավաստիություն և միայն խիստ մասնագիտական մոտեցումներով ստացված նման տվյալները կարելի է օգտագործել գիտական հետազոտությունների ժամանակ: Սակայն, միաժամանակ, թյուրըմբռնման արդյունք է այն կարծիքը, որ քաղաքական մշակույթը կարող է օգտագործվել միայն արևմտյան հասարակությունների ուսումնասիրման նպատակով, քանի որ այդ երևույթը արևմտյան աշխարհի ծնունդ է, որտեղ առկա են կայացած ժողովրդավարություն և դրան համապատասխան քաղաքական մշակույթ: Այս մոտեցման դեպքում միգուցե իսկապես կարելի կլինեք համարել, որ իմաստ չունի քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը հասարակական երևույթների հետազոտությունների ժամանակ, քանի որ կայացած ժողովրդավարության պայմաններում տարբեր հասարակությունների ընկալումները բավական մոտ են միմյանց ու տարբերությունները ժամանակի ընթացքում մեծ չեն ու ազդեցություն կարող են ունենալ ոչ առանցքային իրադարձությունների հետ կապված: Սակայն, օրինակ, տրանսֆորմացվող, մասնավորապես՝ հետխորհրդային հասարակություններում իրավիճակը շատ ավելի բարդ է, և քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը, որոշ դեպքերում, պարզապես այլընտրանք չունի: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ հենց այդ դեպքում է առավել ցայտուն երևում, որ «մշակույթ» բառի օգտագործումը «քաղաքական մշակույթ» բառակապակցությունում լիարժեք չի համապատասխանում այդ բառի ավանդական իմաստին, այլ հարգանքի տուրք է այդ ուսումնասիրությունների հիմնադիրների առաջարկած ձևակերպմանը: Ինչ վերաբերում է տրանսֆորմացվող հասարակությունների ուսումնասիրության ժամանակ «քաղաքական մշակույթ» գաղափարի կիրառմանն, ապա դրա անհրաժեշտությունն առավել ցայտուն երևում է այն երևույթների դիտարկման ժամանակ, որոնց դեպքում կարևոր գործոն է հասարակության վերաբերմունքը իշխանության նկատմամբ: Մասնավորապես, նման երևույթ է ոչ սահմանադրական մեխանիզմներով իշխանափոխությունը՝ հեղափոխությունը, երբ ամենաազդեցիկ գործոնը դառնում է հասարակության զգալի հատվածի դժգոհությունը իշխանության գործունեությունից, ընդվզումը: Այստեղ դրսևորվում է ավանդական ժողովրդավարական հասարակությունների և տրանս-

Ֆորմացվող հասարակությունների ամենամեծ տարբերությունը: Առաջինների պատկերացումները զգալիորեն ավելի մոտ են հասարակական երևույթների և տարբեր ինստիտուտների վերաբերյալ առկա տեսական պատկերացումներին, մինչդեռ երկրորդների դեպքում անգամ հիմնարար գաղափարների (ժողովրդավարություն, իշխանություն, օրենքի գերակայություն և այլն) վերաբերյալ պատկերացումները կարող են մեծապես տարբերվել տեսականորեն հաստատագրված սահմանումներից: Քանի որ հասարակության ակտիվ հատվածի վերաբերմունքը իշխանության նկատմամբ ձևավորվում է հենց այդ պատկերացումների հիման վրա, ապա այն երևույթների ուսումնասիրության ժամանակ, որոնցում զգալի ազդեցություն ունի հասարակության վերաբերմունքը, «քաղաքական մշակույթ» գաղափարի օգտագործումն այլընտրանք չունի: Իհարկե, կարևոր են կոնկրետ ուսումնասիրության նպատակն ու խնդիրները և, ըստ այդմ, անհրաժեշտ է ճշտել յուրաքանչյուր հետազոտության դեպքում դիտարկվող գործոնների կազմը և դրանց վերլուծության սկզբունքներն ու հարացույցը: Պատահական չէ, որ 80-ականներից փորձեր են արվել հստակեցնել քաղաքական մշակույթի կառուցվածքն ու պարամետրերը: Մասնավորապես, Գ. Ալմոնդը փորձել է դասակարգել քաղաքական մշակույթը երեք խմբի՝ համակարգի, գործընթացի և քաղաքականության (policy) մշակույթների: Համակարգի մշակույթը բնութագրում է քաղաքական հեղինակությունների, պաշտոնյաների և առհասարակ վարչակարգի նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքը, գործընթացի մշակույթը ընդգրկում է քաղաքական դերակատարների և այլ քաղաքական գործիչների նկատմամբ վերաբերմունքը, քաղաքականության մշակույթը վերաբերում է համակարգի «արտադրանքի» (outputs) ներքին և արտաքին քաղաքականության գնահատականներին<sup>13</sup>: Երեք բայց մի փոքր այլ (մշակութային, կառուցվածքային և գործընթացային) խմբերի կամ մակարդակների են առաջարկել բաժանել քաղաքական մշակույթը Դ. Ֆուքսը և Հ.-Դ. Քլինգեմանը՝ այդ մոտեցումն օգտագործելով համեմատելու համար

<sup>13</sup> **Almond Gabriel**, Politische Kultur-Forschung - Rückblick und Ausblick, *Dirk Bergschlosser, Jakob Schissler (Hrsg.), Politische Kultur in Deutschland, Bilanz und Perspektiven der Forschung, Opladen 1987, S. 37.*

Արևմուտքի և Արևելքի ժողովրդավարական հասարակությունները<sup>14</sup>: Ընդ որում, նրանք խնդիրը փորձել են դիտարկել ինչպես առանձին երկրների մակարդակով, այնպես էլ երկրների խմբերի, համարելով, որ քաղաքական մշակույթի ձևավորման վրա զգալի ազդեցություն ունի նաև քաղաքակրթական գործոնը:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ հետխորհրդային այն երկրների հնարավորությունն է ավելի մեծ արևմտյան մոդելի քաղաքակա-նություն և տնտեսություն ունենալու, որոնք նախկինում պատկանել են ոչ թե ուղղափառ կամ իսլամական, այլ կաթոլիկ կամ բողոքական քաղաքակրթություններին<sup>15</sup>: Ու. Ռայզինգերի համար քաղաքա-կրթական չափանիշը մի փոքր այլ դրսևորում ունի՝ կարևոր է, թե տվյալ երկիրը նախկինում Բրիտանական, Հաբսբուրգյան, Ռուսական, թե Օսմանյան կայսրության տիրապետության տակ է եղել<sup>16</sup>: Քանի որ խոսքը հետխորհրդային երկրներին է վերաբերում, ապա Դ. Ֆուբսի<sup>17</sup> և Ռ. Ռոհրշնայդերի<sup>18</sup> կարծիքով կարևոր է նաև, թե տվյալ երկիրը որքան ժամանակ է լենինյան վարչակարգի իշխանության տակ գտնվել: Քաղաքակրթական գործոնի էական դրսևորումներից մեկը, որը հատկապես ակնառու է հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, «ոչ ֆորմալ ինստիտուտների» առկայությունն է, որոնք բնութագրում են հասարակության շրջանում տարածված սոցիալական նորմերի և գործընթացների մի առանձնահատուկ խումբ<sup>19</sup>: Ի տարբե-րություն ֆորմալ ինստիտուտների (սահմանադրություն, օրենքներ, կառավարման նորմեր, քաղաքական համակարգի ֆորմալ կառույց-

<sup>14</sup> **Fuchs Dieter, Klingemann Hans-Dieter**, Democratic communities in Europe. A comparison between East and West, *Hans-Dieter Klingemann, Dieter Fuchs, Jan Zielonka (ed.), Democracy and Political Culture in Eastern Europe, New York 2006*, pp. 25-66.

<sup>15</sup> **Huntington Samuel**, *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, New York 1996.

<sup>16</sup> **Reisinger William**, *Reassessing Theories of Transition Away From Authoritarian Regimes: Regional Patterns among Postcommunist Countries*, Chicago 1999.

<sup>17</sup> **Fuchs Dieter**, *The Democratic Culture of Germany*, *Pippa Norris (ed.), Critical Citizens: Global Support for Democratic Government, Oxford 1999*.

<sup>18</sup> **Rohrshneider Robert**, *Learning Democracy: Democratic and Economic Values in Unified Germany*, Oxford 1999.

<sup>19</sup> **North Douglass**, *Institutions, Institutional Change and Economic Performance*, Cambridge 1993.



ներ)՝ ոչ ֆորմալ ինստիտուտները հիմնվում են ավանդույթների, սովորույթների, բարոյական արժեքների, կրոնական համոզմունքների, կապերի և վարքագծի այլ՝ օրենսդրությամբ չսահմանված նորմերի վրա: Ըստ Մերկելի և Կրուասանի՝ ֆորմալ ինստիտուտների ներսում և դրսում գոյություն ունեն քաղաքական խաղի ոչ ֆորմալ կանոններ, և այդ ոչ ֆորմալ կարգավորումները առաջարկում են հաղորդակցման, շահերի ներկայացման և քաղաքականության իրագործման ավելի գործունե ձևեր և այդ կերպ լրացնում ավտորիտար վարչակարգի ֆորմալ կարգավորումների և ինստիտուտների<sup>20</sup> դերակատարությունը: Խորհրդային ոչ ֆորմալ կապերից շատերը գոյություն ունեն հետխորհրդային տարածքում, սակայն թարմացված և վերանայված տեսքով և ձևով<sup>21</sup>:

Քաղաքական մշակույթի տարրերի դասակարգման մեկ այլ տարբերակ է առաջարկում Լուսիան Պայն՝ առանձնացնելով երկու մակարդակներ՝ հաստ (thick) և բարակ (thin): Հաստ մշակույթը խոր արմատացած է, տվյալ հասարակության ինստիտուտներում և պրակտիկաներում ընդունված: Բարակ մշակույթը ամուր չէ, ավելի փոփոխական և դինամիկ, հիմնված է ավելի շատ իմացական ընկալման վրա և այդ պատճառով որոշակի պայմաններում կարող է փոխվել: Հաստ մշակույթի արժեքներն են ընտանիքը, կրոնը, ազգությունը, իսկ բարակ մշակույթի համար՝ կարգապահությունը, ազատությունը, միջանձնային և ինստիտուցիոնալ վստահությունը<sup>22</sup>: Միշլերի և Փոլակի կարծիքով մշակույթի այս երկու մակարդակների տարանջատումը կարող է օգնել ավելի լավ ըմբռնելու հետկոմունիստական հասարակություններում տեղի ունեցող տրանսֆորմացիոն գործընթացները<sup>23</sup>:

<sup>20</sup> **Merkel Wolfgang, Croissant Aurel**, Formale und informale Institutionen in defekten Demokratien, Politische Vierteljahresschrift 2000, S. 17.

<sup>21</sup> **Babajanian Babken V.**, Social Capital and Community Participation in Post-Soviet Armenia: Implications for Policy and Practice, *Europe-Asia Studies*, 2008, p. 1304.

<sup>22</sup> **Lucian Pye W.**, Culture as Destiny, *Detlef Pollack, Jörg Jacobs, Olaf Müller, Gert Pickel (ed.)*, Political Culture in Post-Communist Europe. Attitudes in new democracies, Burlington 2003, p. 8.

<sup>23</sup> **Mishler William, Pollack Detlef**, On Culture, Thick and Thin: Toward a Neo-Cultural Synthesis, *Detlef Pollack, Jörg Jacobs, Olaf Müller, Gert Pickel (ed.)*,

## Մեթոդաբանական նկատառումներ

Քաղաքագիտական հետազոտություններում քաղաքական մշակույթի օգտագործման հնարավորությունների վերը բերված դիտարկումը ցույց տվեց, որ այս հոդվածի նպատակների իրագործման տեսակետից առավել արդյունավետ կարող է լինել Դ. Ֆուքսի և Հ.-Դ. Քլինգեմանի մոդելի<sup>24</sup> մասնակի կիրառումը՝ հիմք ընդունելով Հայաստանի համար 2004-2017թթ. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրի ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված տվյալները<sup>25</sup>։ Իհարկե, այդ մոդելը հեղինակներն օգտագործել են միանգամայն այլ՝ ժողովրդավարության մակարդակը տարբեր երկրներում գնահատելու նպատակով։ Սակայն, քանի որ դիտարկվում են քաղաքական մշակույթի բոլոր երեք մակարդակները՝ արժեքներ, կարգավորումներ, ինչպես նաև ինստիտուտներ ու գործընթացներ, և դրանց համար օգտագործվող ցուցիչները լիարժեքորեն բնութագրում են հասարակության վերաբերմունքը, այս հոդվածում ձևակերպված խնդրի լուծման նպատակով ևս կիրառվում է ցուցիչների այդ համախումբը։ Ինչպես վերը նշվել է, այդ մոդելն ունի երկու բաղադրիչ՝ դիտարկվող յուրաքանչյուր երկրի համար քաղաքական մշակույթի երեք չափումների արդյունքները և քաղաքակրթական նախադրյալը։ Հայաստանի դեպքում կօգտագործվի միայն առաջինը, քանի որ երկրորդի կիրառումն արդյունավետ չի լինի այդ դեպքի առանձնահատկությունների պատճառով։ Ս. Հանթինգթոնի դասակարգմամբ առանձնացվող քաղաքակրթություններից ոչ մեկի մեջ Հայաստանն ամբողջությամբ չի տեղավորվում, քանի որ այդ

---

*Political Culture in Post-Communist Europe. Attitudes in new democracies. Burlington 2003, p. 252.*

<sup>24</sup> **Fuchs Dieter, Klingemann Hans-Dieter**, Democratic communities in Europe. A comparison between East and West, *Hans-Dieter Klingemann, Dieter Fuchs, Jan Zielonka (ed.), Democracy and Political Culture in Eastern Europe, New York 2006*, pp. 25-66; **Klingemann Hans-Dieter**, Dissatisfied Democrats. Democratic Maturation in Old and New Democracies, in: Russel J. Dalton, Christian Welzel, *The Civic Culture Transformed: From Allegiant To Assertive Citizens, Cambridge 2014*, pp. 116-157.

<sup>25</sup> Source Questionnaire, Caucasus Research Barometer, <https://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=en> [Stand: 2018-11-15]

դասակարգման հիմքում դավանաբանական պատկանելությունն է, իսկ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դավանաբանությունը քրիստոնեության մեջ առանձնահատուկ է և չի նույնացվում ոչ բողոքականության, ոչ կաթոլիկության, ոչ ուղղափառության հետ: Ըստ կայսրությունների դասակարգման դեպքում էլ խնդիրներ են առաջանում: Այո, Հայաստանի մի հատվածը եղել է Օսմանյան կայսրության կազմում, մյուս հատվածը՝ նախ Ռուսական կայսրության, ապա Խորհրդային Միության, և դա իր ազդեցությունն ունեցել է քաղաքական մշակույթի և ինքնության աղճատման տեսակետից: Սակայն միայն պարզունակ մոտեցմամբ կարելի է Հայաստանի նախադրյալները գնահատել սուկ այդ փաստերով: Չպետք է մոռանալ, որ, ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների, Հայաստանն ունի բազմադարյա պատմություն և բավական փորձ եվրոպական քաղաքակրթության դասական՝ հունական և հռոմեական հիմքերի ձևավորմանը, ինչպես նաև Եվրոպայում քրիստոնեության տարածմանը մասնակցության տեսակետից: Այդ պատճառով հետխորհրդային երկրների ուսումնասիրության ժամանակ Հայաստանի առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն: Պատահական չէ, որ երբեմն նման հետազոտությունների ժամանակ հեղինակները հանգում են իրենց համար անբացատրելի եզրակացությունների:<sup>26</sup> Կարևոր է նաև, որ քաղաքակրթական կամ կայսերական նախընթաց ազդեցության և հեղափոխության միջև որևէ առնչություն դեռևս չի հայտնաբերվել:

Հայաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի ունեցած հեղափոխական գործընթացների նախադրյալների բացահայտման նպատակով ստորև իրականացվող ուսումնասիրությունը հիմնված է հետևյալ հաստատագրումների վրա.

-հողվածում օգտագործվող իմաստով հեղափոխություն կարելի է համարել 1998թ. իշխանափոխությունը, երբ երկրի համար կենսական նշանակություն ունեցող Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ մի կողմից երկրի նախագահի, մյուս կողմից՝ վարչապետի և պաշտպանության

<sup>26</sup> **Delcour L., Wolchuk K.,** The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation, *Journal of European Integration*, 2015, 37 (4), 1-17.

նախարարի միջև տարաձայնությունների պատճառով նախագահը հրաժարական ներկայացրեց, որին հետևեցին մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների հրաժարականներ, իսկ մեկ տարի անց տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում խորհրդարան չանցավ մինչ այդ իշխող քաղաքական ուժը,

-նույն իմաստով հեղափոխություն կարելի է համարել 2018թ. իշխանափոխությունը, երբ զանգվածային ընդվզման արդյունքում հրաժարական ներկայացրեց երկրի վարչապետը, ապա և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, իսկ մեկ տարի անց տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում խորհրդարան չանցավ մինչ այդ իշխող քաղաքական ուժը,

-2003-2005թթ., երբ նախկին խորհրդային հանրապետություններում (Ուկրաինա, Վրաստան, Ղրղզստան) տեղի էին ունենում «գունավոր հեղափոխություններ», Հայաստանում դա տեղի չունեցավ,

-1998-2003թթ. ժամանակահատվածի համար տվյալների բացակայությունը կառուցվածքային մակարդակում լրացնելու համար կկազմվի հատուկ աղյուսակ՝ այդ ժամանակաշրջանի մեկնարկային ցուցանիշ համարելով 1997թ. տվյալները, եզրափակվելով՝ 2004թ. տվյալները,

-վերլուծությունների պատկերն ավելի ցայտուն լինելու համար կկիրառվի անվստահության ինտեգրալ ցուցանիշ, որը ստացվում է Աղյուսակ 1-3-ի «բոլորովին չեմ վստահում» և «այնքան էլ չեմ վստահում» սյունակների տվյալներն, իսկ վստահության ինտեգրալ ցուցանիշի համար՝ «լիովին վստահում եմ» և «որոշ չափով վստահում եմ» սյունակները:

### **Էմպիրիկ տվյալների վերլուծություն**


**Առաջին իշխանափոխությունը հետխորհրդային Հայաստանում:** 1996թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած բողոքի զանգվածային ցույցերից և ռազմական ուժի կիրառմամբ դրանք ճնշելուց հետո ձևավորված բարդ բարոյահոգեբանական իրավիճակը հաղթահարելու նպատակով կառավարության կազմը կարճ ժամանակում երկու անգամ կտրուկ փոխվեց: 1997թ. նկատվեցին որոշ դրական տեղաշարժեր, սակայն տարեվերջին Նախագահը փորձեց

կտրուկ քայլով վերականգնել նախորդ տարվա ընթացքում կորսված քաղաքական դիրքերը: Նախ մամուլի ասուլիսով, ապա «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածով<sup>27</sup> փորձեց նոր մոտեցումներ առաջադրել երկրի համար կենսական, առաջին հերթին՝ Ղարաբաղյան խնդրին վերաբերող հարցում: Հիմնական գաղափարն այն էր, որ «ստատուս-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետև դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները», «պատերազմը պետք է բացառվի, ուստիև Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայնումիայն խաղաղ բանակցությունների միջոցով», «հարցը պետք է լուծվի փոխզիջումով, թե՞ կողմերից մեկի պարտությամբ, եւ այդ դեպքում ո՛վ է լինելու պարտվող կողմը»: Ընդ որում, ոչ միայն անհասկանալի էր թե ինչպես կարելի է խոսել փոխզիջման մասին, երբ մյուս կողմն ամեն օր անում է ռազմատենչ հայտարարություններ ու ոչ մի՝ անգամ հեռավոր ակնարկ չկար զիջման մասին, հրապարակավ չէր ասվում, թե ի՞նչ է պատրաստվում Տեր-Պետրոսյանը զիջել, այլև, թե ինչպե՞ս կարող է երկրի նախագահը կասկածի տակ դնել իր քաղաքացիների ընտրությունը՝ «պատերազմ, թե՞ խաղաղություն» հարցադրումով: Այսօր ոչ միայն ակնհայտ է, որ նախկին նախագահի «կանխատեսումները» չիրականացան, այլև, որ նա պատրաստվում էր զիջել ԼՂԻՄ-ի հարակից որոշ տարածքներ, որոնք գտնվում էին ԼՂՀ պաշտպանության բանակի վերահսկողության ներքո: Այդ գաղափարը Տեր-Պետրոսյանը կրկին ասպարեզ բերեց 2012թ. խորհրդարանական ընտրությունների քարոզչության շրջանում՝ պնդելով, որ նման զիջումից հետո միջազգային հանրությունը կգնահատի այդ վեհ քայլն ու լուծում կգտնի: Քանի որ հայտնի չէ ինքնորոշման հակամարտության գեթ մեկ դեպք, երբ այն կարգավորվել է փոխզիջման ճանապարհով, չկար որևէ հիմք՝ ենթադրելու համար, որ հայկական կողմերի զիջումներից հետո միջազգային հանրությունը կարող էր լուծել խնդիրը, Տեր-Պետրոսյանի առաջարկները դրական արձագանք

<sup>27</sup>Տեր-Պետրոսյան Լ., «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը». 1 նոյեմբերի, 1997թ., <https://www.aniarc.am/2017/11/01/levon-ter-petrosyan-article-war-or-peace-1997/>


չունեցան հանրության շրջանում, սակայն պատճառ դարձան, որ իշխանությունը պառակտվի և մյուս կողմը՝ վարչապետը, պաշտպանության նախարարը, պահանջեն երկրի նախագահի հրաժարականը: Վերջինս ուներ երկու հնարավորություն՝ ներկայացնել հրաժարական կամ պաշտոններից հեռացնել իր հրաժարականը պահանջողներին և ուղերձով դիմել ժողովրդին՝ այդ քայլի աջակցության ակնկալիքով: Սակայն Eurobarometer-ի՝ 1993-1997 թվականներին Հայաստանում իրականացված հարցումների պատկերը՝ բերված նկար 1-ում, վկայում է, որ իշխանությունն, անգամ 1996թ. հետընտրական ճգնաժամի հաղթահարումից հետո, չունեք հասարակության վստահությունը՝ երկրորդ ճանապարհով գնալու համար:

Նկար 1.



Նույնն է վկայում նաև այդ հարցման մեկ այլ հարցի պատասխանների պատկերը՝ բերված նկար 2-ում: Ակնհայտ է, որ հարցը ժողովրդավարության զարգացմանն է վերաբերում, սակայն ժողովրդավարության հաստատումն ընկալվում էր որպես բարդ սոցիալ-տնտեսական վիճակից դուրս գալու ելք:

Նկար 2.



Վստահության շատ ցածր մակարդակ են արձանագրել նաև World Value Survey-ի 1997թ. փետրվարին Հայաստանում անցկացված հարցումները՝ մի շարք կառույցների նկատմամբ, որոնց արդյունքները<sup>28</sup> բերված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

	Լիո-վին վստահում են	Որոշ չափով վստահում են	Այն-քան էլ չեն վստահում	Բոլորովին չեն վստահում	Դժվար են պատասխանել
Արդարադատություն	6,6	23,8	37,6	29,1	2,9
Մամուլ	3,0	30,1	42,9	20,9	3,1
Կառավարություն	7,9	33,3	31,0	25,0	2,8
Կուսակցություններ	0,8	14,3	40,4	39,9	4,7
Խորհրդարան	2,4	26,9	30,8	36,8	3,2
Ոստիկանություն	6,6	24,8	35,6	31,4	1,6

<sup>28</sup> Armenia 1997, <http://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV3.jsp>

Արդյունքում, 1998թ. սկզբին երկրի նախագահի հրաժարականով սկիզբ առավ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հրաժարականների շարք, որոնց հետևեցին վերադասավորումներ Ազգային ժողովում, ապա՝ նախագահական ընտրություններ, և, ի վերջո, 1999թ. մայիսին՝ խորհրդարանական ընտրություններ, ու ամբողջացավ ոչ սահմանադրական իշխանավորության առաջին գործընթացը Հայաստանում: Բիարկե, այն հետևանք էր իշխանության պառակտման, ինչն, ի դեպ, բնորոշ էր հետխորհրդային տարածքի երկրներին տրանսֆորմացիայի առաջին 15 տարիներին: Սակայն բերված տվյալները վկայում են, որ անկախության վերահաստատումից հետո անցած 6-7 տարիներին ձևավորվել էր խորը անբավարարություն իշխանությունների նկատմամբ, թեև 1991 թվականին ինչպես անկախության հանրաքվեի, այնպես էլ առաջին նախագահական ընտրությունների ժամանակ հասարակությունն անվերապահ աջակցություն էր հայտնել իշխանություններին: Այդուհանդերձ, նկար 1-ը և նկար 2-ը վկայում են, որ արդեն իսկ 1993-ին անվստահության մակարդակը եղել է բավական բարձր և մինչ իշխանավորությունը ճգնաժամը չի հաջողվել հաղթահարել:

Ադյուսակ 1-ում բերված առանձին կառույցների վստահության ցուցանիշների շարքում աչքի է զարնում հատկապես կուսակցությունների վերաբերյալ արձանագրված ցուցանիշը:

90-ականներին դա կարող էր բացատրվել որպես խորհրդային միակուսակցական համակարգի վերաբերյալ հիշողության հետևանք, սակայն իրականում խնդիրը շատ ավելի խորն է: 90-ականներին իրական բազմակուսակցական համակարգի մասին գիտելիքների բացակայությունը և հասարակական գիտակցության տրանսֆորմացիայի մեծ իներցիան չէին ապահովում այն հիմքը, որի վրա պետք է ձևավորվեր բազմակուսակցական համակարգը: Բավական է համեմատել այդ շրջանում Հայաստանում և Լեհաստանում կուսակցությունների գործունեության օրակարգերն ու քննարկած խնդիրները<sup>29</sup>

<sup>29</sup> **Բիեգաշևիչ Պ.**, «Գղանակի լիբերալները». Լեհաստանի պրագմատիկ լիբերալիզմի հիմնադիրները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2017, 1, 5-34; **Հովսեփյան Ն.**, Հայաստանի կուսակցությունների



և պարզ կդառնա, որ մինչ ԽՍՀՄ փլուզումը կոմունիստական ճամբարում գտնված երկու հասարակությունների քաղաքական կազմակերպությունները որակապես տարբեր պատրաստվածությամբ և խնդիրներով էին սկսում այդ ճամբարի թելադրած սահմանափակումներից զերծ գործընթացները:

Քանի որ բազմակուսակցական համակարգն ունի համակարգաստեղծ նշանակություն<sup>30</sup>, այն ձևավորում է պետության բոլոր քաղաքական ինստիտուտները, ապա այդ համակարգի կայացման խնդիրը թերևս ամենալուրջ մարտահրավերն է հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում՝ հաշվի առնելով նաև հասարակական գիտակցության տրանսֆորմացիայի դժվարությունները:

2000-ականների երկրորդ տասնամյակում անցկացված հարցումները վկայում են, որ բազմակուսակցական համակարգի կայացման հիմնախնդիրը մնում է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամենալուրջ մարտահրավերն ու զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը: Աղյուսակ 1-ում բերված տվյալները մանրամասն կվերլուծվեն հոդվածի հաջորդ բաժնում՝ 2000-ականների տվյալների հետ համեմատությամբ:

***Հայաստանում ոչ սահմանադրական մեխանիզմներով երկրորդ իշխանափոխությունը:*** 1998-2003թթ. երկրում իրավիճակի գնհատման արժանահավատ տվյալներ չկան և միայն 2004թ. սկսած յուրաքանչյուր տարվա համար կարելի է գտնել տվյալներ (որոշ ցուցանիշների համար դրանք արձանագրվել են 2008 կամ 2011 թվականից) Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրի բազայում: Այդ տվյալների վերլուծությունը կիրականացվի քաղաքական մշակույթի բոլոր երեք չափումներով: Առաջին՝ մշակութային մակարդակը կօգնի պարզել, թե հիմնարար արժեքների մակարդակում Հայաստանի հասարակությունն ինչքանով է համապատասխանում ժողովրդավարական չափանիշներին: Ակնհայտ է, որ այստեղ արմատական փոփոխություններ հնարավոր չէ ակնկալել՝ հասարակական

---


ձևավորումը անկախության վերականգնման գործընթացի համատեքստում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2017, 1, 35-60:

<sup>30</sup> **Торосян Т.**, Перспективы и вызовы перехода Армении к системе парламентского правления, *Современное конституционное обозрение*, 2016, 4, 29-40.

գիտակցության տրանսֆորմացիան ամենաբարդն է ու ամենադժվարը<sup>31</sup>: Երկրորդ՝ կառուցվածքային մակարդակը վերլուծելիս փորձ կարվի պարզել, թե որ կառույցների ու կարգավորումների նկատմամբ և ինչ աստիճանի անվստահությունը կարող է դառնալ ընդվզման պատճառ: Երրորդ՝ գործընթացի մակարդակը կարող է բացատրել հասարակության վերաբերմունքը տեղի ունեցող գործընթացների նկատմամբ:

**Մշակութային մակարդակ:** Այլ անձանց նկատմամբ վստահությունը սոցիալական համակեցության կարևորագույն տարրերից մեկն է: Քաղաքական մշակույթի ուսումնասիրման մեջ այս երևույթը կապված է Ռոբերտ Փուտմանի սոցիալական կապիտալի հետ, նկատի ունենալով. «սոցիալական կյանքի առանձնահատկությունները՝ կապեր, նորմեր, վստահություն, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս միասին ավելի արդյունավետ գործել, որպեսզի հասնեն իրենց նպատակներին»<sup>32</sup>: Ինչպես նկար 3-ից երևում է ներանձնային վստահությունը Հայաստանում բավական ցածր է:

Նկար 3



*Տվյալները՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրի:*


<sup>31</sup> **Թորոսյան Ս.**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Գիտություն, Երևան, 2006թ., էջ 297-300:

<sup>32</sup> **Putnam Robert**, Tuning In, Tuning out: the Strange Disappearance of Social Capital in America, *Political Science and Politics*, 28, 1995.

Ուշագրավ է, որ դիտարկվող ժամանակահատվածում ցուցանիշները կտրուկ վայրիվերումներ են ունեցել: Եթե 2008թ. բարձր՝ մոտ 55 տոկոսի անվստահության ցուցանիշը կարելի է բացատրել մարտի 1-ին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների հոգեբանական հետևանքներով, 2009-11թթ. 25-30 տոկոսը՝ կայուն մակարդակի վերադարձով, ապա 2012թ.-ից անվստահության կտրուկ աճը՝ առանձնահատուկ իրադարձության բացակայության պայմաններում, կարող է միայն ընդհանուր իրավիճակի վատթարացման հետևանք լինել: Իհարկե, միջանձնային վստահությունը իշխանության նկատմամբ վստահության համարժեքը չէ, սակայն ակնհայտ է, որ ընդհանուր անվստահությունը չի կարող միջանձնային վստահության վրա էական ազդեցություն չունենալ:

2012թ. կտրուկ փոփոխության սահմանագիծ է նաև մեկ այլ՝ օրինապաշտության ցուցիչի համար, որը բերված է նկար 4-ում:

Նկար 4.




*Տվյալները՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրի:*

Եթե մինչև 2012թ. հարցվածների մոտ 75 տոկոսը համարում էր, որ «քաղաքացու համար շատ կարևոր է մշտապես ենթարկվել օրենքներին», ապա դրանից հետո նման կարծիքն ունեն հարցվածների 50 տոկոսից էլ պակասը: Այդ կտրուկ անկումը վկայում է զգալի թվով մարդկանց շրջանում լուրջ բարոյահոգեբանական իրավիճակի և

հուսահատության մասին, ովքեր պատրաստ են ոչ օրենսդրական մեխանիզմներով լուծել խնդիրները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակության քաղաքականապես ակտիվ հատվածը նրա 25-30 տոկոսն է, կարելի է արձանագրել, որ 2017թ. Հայաստանում առկա էր հասարակության ընդվզմանը հակված այնպիսի հատված, որի թվաքանակը կարող էր որոշիչ դառնալ իշխանափոխության համար՝ համապատասխան առիթի դեպքում: Իհարկե, հետաքրքիր կլինեին նախընթաց տարիների ցուցանիշները՝ հասկանալու համար 2011թ. բարձր ցուցանիշի ծագման պատճառը, քանի որ «խորհրդային ժառանգությունը» չէր կարող այդքան ուշ դրսևորվել: Մինչդեռ մեկ այլ ցուցիչ՝ իշխանության դերակատարության վերաբերյալ, ակնհայտորեն վկայում է, որ խորհրդային շրջանի որոշ պատկերացումներ ու արժեքներ բավական «կենսունակ» են անգամ քառորդ դար անց: Ինչպես երևում է նկար 5-ից, անգամ 26 տարի անց հասարակության մոտ 70 տոկոսը համարում է, որ իշխանությունը պետք է ծնողի դերակատարություն ունենա:

Նկար 5.



Ակնհայտ է, որ խորհրդային ժամանակներին հատուկ պատկերացումների ու արժեքների պահպանումը հասարակության լայն շրջանակներում ավելի է խորացնում անվստահությունն իշխանությունների նկատմամբ՝ մեծացնելով ոչ սահմանադրական ճանապարհով խնդիրների լուծման հավանականությունը: Միաժամանակ, առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հասարակության վերաբերմունքի փոփոխություններն ինչպես ժամանակի ընթացքում, այլև տարբեր ինստիտուտների նկատմամբ,

ինչը դրսևորվում է քաղաքական մշակույթի կառուցվածքային մակարդակում:

**Կառուցվածքային մակարդակ:** Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան բարոմետրի տվյալները ինստիտուտների վերաբերյալ կարելի է բաժանել երեք՝ պետական կառավարման, ադմինիստրատիվ և այլ ինստիտուտների խմբերի: Այդ տվյալները բերված են համապատասխանաբար Աղյուսակ 2-4-ում: Անմիջապես կարելի է նկատել, որ 2008 թվականից սկսած տարիների ընթացքում տվյալները կտրուկ փոխվել են: Միաժամանակ, դիտարկվող ժամանակաշրջանի վերջում արձանագրված տվյալները համեմատելի են Աղյուսակ 1-ում բերված տվյալների հետ: Հետևաբար, 2018թ. հեղափոխությունից հետո տարբեր քաղաքական ուժերի և գործիչների ընդհանրական մերժողական հայտարարությունները վերջին երկու կամ երեք տասնամյակների պետական կառավարման վերաբերյալ, սուսկ քաղաքական նպատակներ են հետապնդում և հեռու են հիմնավոր տեսակետներ լինելուց: Մինչդեռ, հասարակական կարծիքի վերաբերյալ Աղյուսակ 1-4-ում բերված հարցումների մասնագիտական վերլուծությունը հնարավորություն կտա ոչ միայն օբյեկտիվորեն գնահատել իրավիճակը տարբեր ժամանակահատվածներում, այլև բացահայտել սխալների ու թերությունների պատճառները, գտնել դրանց վերացման հնարավորությունները: Այդ նպատակով ստորև կներկայացվի համեմատական վերլուծություն ինչպես 1997 և 2015/2017թթ. ցուցանիշների, այնպես էլ 1997թ. և 2004/2006թթ., ինչպես նաև 2017թ. և 2004/2006թթ. ցուցանիշների համար:

Աղյուսակ 2. Պետական կառավարման ինստիտուտներ

	տարի	1	2	3	4	5	6
Նախագահ	04/06	11,9	7,3	15,9	29,1	33,2	2,4
	08/09	18,5	9,5	19,5	31,5	18,5	4
	10/11	22,5	14,5	26,5	20,5	11	5
	12/13	34,5	14,5	24	17	6	4
	15/17	45	19	15,5	12,5	4	4

Խորհրդարան	04/06	21,8	17	30,2	22,3	5,6	3
	08/09	28,5	17	26,5	20	6	2
	10/11	28	19,5	27,5	14	5	7
	12/13	38,5	19,5	23,5	11	2,5	5
	15/17	43	23	17,5	9	2,5	5
Գործադիր իշխանություն	04/06	18,2	17,2	31,7	23	6,3	3,5
	08/09	20	14,5	24	28,5	10	2,5
	10/11	25	19	27	17,5	6,5	6
	12/13	37	18	24,5	13,5	3,5	4,5
	15/17	40,5	21	17	13	3,5	4,5

*1-Բոլորովին չի վստահում, 2-մասամբ չի վստահում, 3-ոչ վստ./ոչ չի վստ., 4-մասամբ վստ., 5-լիովին վստ., 6- պատասխ. չկա*

Ըստ Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 2-ի տվյալների, եթե 2004/2006թթ. խորհրդարանի նկատմամբ անվստահությունը 38,8 տոկոս էր, ապա 1997-ին՝ 67,6, իսկ 2015/17թթ.՝ 66 տոկոս: Նման պատկեր է թե կառավարության դեպքում՝ 2004/2006թթ.՝ 35,4, 1997թ.՝ 56, 2015/2017թթ.՝ 61,5 տոկոս, թե նախագահի՝ 2004/2006թթ.՝ 19,2, 2015/2017թթ.՝ 64 տոկոս: 1997թ. երկրի նախագահի նկատմամբ անվստահության վերաբերյալ տվյալներ չկան, սակայն, ինչպես վերը նշվեց, 1998թ. սկզբին առաջին նախագահը ստիպված էր հրաժարական ներկայացնել և չփորձեց դիմել և աջակցություն ստանալ հասարակությունից, որը 1996թ. նախագահական ընտրություններից հետո շարունակաբար դրսևորել էր խորը անվստահություն:

Հետաքրքիր են նաև Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 3-ի համեմատության արդյունքները: Վերջինում բերված երկու վարչական ինստիտուտների՝ ոստիկանության և դատական համակարգի/արդարադատության ոլորտի վերաբերյալ ցուցանիշներ առկա են նաև Աղյուսակ 1-ում: Դրանք վկայում են, որ միտումները նույնն են, ինչ պետական կառավարման մարմինների նկատմամբ: Այսպես, եթե ոստիկանությանը 2004/2006 թթ. չի վստահել 33,4 տոկոսը, ապա 2015/2017թթ.՝ 44 տոկոսը, մինչդեռ 1997թ. չի վստահել 72 տոկոսը: Դատական համակարգի դեպքում պատկերը հետևյալն է՝ 2004/2006թթ.՝

35,8 տոկոս, 2015/2017թթ.՝ 51 տոկոս, 1997թ.՝ 66,7 տոկոս: Մինչդեռ մյուս երեք նույնպես պետական համակարգերի նկատմամբ վերաբերմունքն այլ է: Առողջապահության և կրթական համակարգերի նկատմամբ անվստահության մակարդակը գրեթե չի փոխվել 2000-ական թվականներին: Առաջին դեպքում՝ 2004/2006թթ. 31,4 տոկոս, 2015/2017թթ.՝ 33 տոկոս, երկրորդ դեպքում՝ 2004/2006թթ.՝ 26 տոկոս, 2015/2017թթ.՝ 27,5 տոկոս: Երրորդ համակարգը, որի նկատմամբ վստահությունն այդ ընթացքում անգամ աճել է, բանակն է: Վստահողների տոկոսը 2004/2006թթ. 74,3-ից 2015/2017թթ.-ին հասել է 81 տոկոսի: Այդ աճի պատճառն ակնհայտ է՝ 2016թ. ապրիլին ադրբեջանական ռազմական ագրեսիային հայկական զինված ուժերի արժանապատիվ պատասխանն էր՝ ավելի մեծացնելով բանակի նկատմամբ մինչ այդ էլ առկա դրական վերաբերմունքը: Մյուս երկու ինստիտուտների՝ առողջապահության և կրթության համակարգերի նկատմամբ վստահությունը գրեթե չի փոխվել, քանի որ թեև դրանք պետական կառույցներ են, սակայն դրանց նկատմամբ վերաբերմունքը քաղաքական ենթատեքստ չունի, ի տարբերություն ոստիկանության և դատական համակարգի, որոնք ընկալվում են որպես իշխանության համար տարատեսակ ներքաղաքական խնդիրների լուծման միջոցներ:

Աղյուսակ 3. Վարչական ինստիտուտներ

	տարի	1	2	3	4	5	6
Դատական համակարգ	2004/06	18,8	17	32,8	22,6	5,2	3,5
	2008/09	23,5	19	26	20	7	4
	2010/11	24	19	25,5	13,5	6	11,5
	2012/13	30	18	25	12,5	3,5	10,5
	2015/17	31	20	23,5	12,5	3	10
Առողջապահ. համակարգ	2004/06	15	16,4	25	30,2	11,5	2,1
	2008/09	11,5	12,5	22,5	37	16,5	1
	2010/11	15,5	13	38	28,5	13,5	1
	2012/13	18,5	14,5	26	31	8	2
	2015/17	17	16	24,5	33	8,5	1

Կրթական համակարգ	2004/06	11	15	25,4	31,4	14,8	2,4
	2008/09	10,5	12	23,5	36,5	15,5	1
	2010/11	9	11,5	31	30,5	15	2
	2012/13	14	13	24,5	35	9	4
	2015/17	13	14,5	23	36,5	9,5	3,5
Ոստիկանություն	2004/06	16,7	15,7	25,1	30,8	9,2	2,5
	2008/09	26,5	16,5	24	21	10,5	1,5
	2010/11	24	20	27	16,5	7,5	5
	2012/13	25,5	13,5	27,5	23,5	6,5	4
	2015/17	27	17	23	23	6,5	4
Բանակ	2004/06	3,9	4,9	14,6	35,9	38,4	2,2
	2008/09	5,5	3	8,5	25	58	0,5
	2010/11	12	8	12,5	32,5	32,5	2,5
	2012/13	11	8	14,5	34	30	2
	2015/17	5,5	6,5	8,5	26	51	1

Աղյուսակ 4-ում բերված տվյալները ևս տարասեռ են և մեկնաբանության կարիք ունեն:

Աղյուսակ 4. Այլ ինստիտուտներ

	տարի	1	2	3	4	5	6
Կուսակցություններ	2004/06	22.3	20	28.9	14.4	3	11.4
	2012/13	35.5	21	27	9	2	6
	2015/17	39.5	23	22	8	1,5	6
Լրատվամիջոցներ	2004/06	6,8	10,4	27	41,1	12,4	2,2
	2008/09	13,5	13,5	35	28,5	8,5	1,5
	2010/11	16	14	37,5	24,5	4,5	3,5
	2012/13	16,5	16,5	38	23,5	3	2,5
	2015/17	16,5	20	35,5	21,5	3	3,5



Մարդու	2004/06	13	10,3	39,1	20,3	8,3	9
իրավունքների	2008/09	12	10,5	26,5	27,5	14,5	8,5
պաշտպան	2010/11	11,5	9	25,5	22,5	11,5	20
	2012/13	15	8,5	29,5	21	9	17,5
	2015/17	14	12	28	22,5	7,5	16,5
Կրոնական	2004/06	8	7,8	27,5	23,8	28,5	3,7
կառույցներ	2008/09	5	3,5	11,5	22,5	55,5	1,5
	2010/11	8	5,5	14,5	28	39	5
	2012/13	5,5	3,5	12,5	34	42	3
	2015/17	5,5	5	10,5	28,5	48	2,5

Առաջին երկու ցուցանիշների վերաբերյալ տվյալներ կան նաև Ադյուսակ 1-ում՝ 1997թ. վերաբերյալ, ինչն առավել ամբողջական եզրակացության հնարավորություն է տալիս: Նախ պետք է արձանագրել, որ դիտարկված ինստիտուտներից առաջինը քաղաքական համակարգի համար ունի համակարգաստեղծ նշանակություն և միանգամայն տրամաբանական է, որ կուսակցությունների նկատմամբ հասարակական անվստահությունը նույն կարգի է, ինչ պետական կառավարման ինստիտուտների նկատմամբ: 1997թ. այն գերազանցել է 80 տոկոսը, 2004/2006թթ.՝ հավասար է եղել 42,3 տոկոսի, 2015/2017թթ.՝ 62,5 տոկոսի: Իհարկե, լրատվամիջոցների նկատմամբ վերաբերմունքն ավելի մեղմ է, սակայն որպես քաղաքական կյանքին անմիջականորեն առնչվող, հաճախ էլ քաղաքական նպատակների ծառայող այս ինստիտուտի նկատմամբ անվստահությունը նույն միտումներն ունի: 1997թ. այն հավասար է եղել 63,8 տոկոսի, 2004/2006թթ.՝ 17,2 տոկոսի, իսկ 2015/2017թթ.՝ 36,5 տոկոսի:

Ինստիտուտների այս խմբում ուշագրավ է նաև մյուս երկուսի նկատմամբ վերաբերմունքը: Եթե Մարդու իրավունքների պաշտպանի դեպքում անվստահությունը 2000-ականներին գրեթե անփոփոխ է (2004/2006թթ.՝ 23,3, 2015/2017թթ.՝ 26 տոկոս), ապա կրոնական կառույցների դեպքում, թեև եղել է բավական ցածր (2004/2006թթ.՝ 15,8 տոկոս), ավելի է նվազել (2015/2017թթ.՝ 10,5 տոկոս): Ակնհայտ է, որ

հասարակության վերաբերմունքը Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու նկատմամբ պայմանավորված է ինչպես վերջինիս բացառիկ դերակատարությամբ՝ որպես հայ ինքնության կարևոր բաղադրիչ, այնպես էլ ընդհանուր անվտանգության խորացման պարագայում քաղաքացիների վերջին ապավեն: Պատահական չէ, որ վստահությունն այս կարևոր ազգային ինստիտուտի նկատմամբ շարունակաբար աճում է (2004/2006թթ.՝ 52,3, 2015/2017թթ.՝ 76,5 տոկոս):

Իչպես վերը նշվեց, 1998-2003թթ. համար տվյալներ չկան: Սակայն, ակնհայտ է, որ այդ ժամանակահատվածում հասարակության վերաբերմունքը վերոհիշյալ երեք խմբերի ինստիտուտների կարելի է գնահատել՝ համեմատելով Աղյուսակ 1-ում բերված 1997թ. տվյալները Աղյուսակ 2-4-ում բերված համապատասխան կառույցների 2004/2006թթ. տվյալների հետ:

Աղյուսակ 5


Ինստիտուտ	Չեն վստահում, 1997—2004թթ.
Խորհրդարան	67,6—38,8
Կառավարություն	56—35,4
Նախագահ	տ/չ —19,2
Արդարադատություն	66,7—35,8
Ոստիկանություն	67—32,4
Կուսակցություններ	80,3—42,3
Լրատվամիջոցներ	63,8—17,2

Աղյուսակից ակնհայտորեն երևում է, որ 1998թ. իշխանափոխությունից հետո էապես նվազել է անվտանգությունը պետական կառավարման բարձրագույն մարմինների, լրատվամիջոցների և անգամ կուսակցությունների նկատմամբ: Սակայն, ինչպես վերը բերված վերլուծությունից երևաց, 2008թ. սկսած անվտանգությունը սկսում է կրկին մեծանալ:

**Գործընթացի մակարդակ:** Հայաստանի պետական քաղաքականության նկատմամբ վերաբերմունքը նույն տրամաբանությունն ունի, ինչ


պետական բարձրագույն մարմինների նկատմամբ վերաբերմունքն է: Եթե 2004թ. այն բավական բարձր մակարդակ ունի՝ հարցվածների 50 տոկոսից ավելին հավանություն էր տալիս դրան, ապա հետագայում սկսում է նվազել, 2008թ. հասնում է 30 տոկոսի, իսկ 2009թ.-ին հավասարվում է հավանություն չտվողների թվաքանակին: Հետագայում վերջինների տոկոսը հարցվածների մեջ շարունակաբար աճում է, իսկ 2013-2017թթ. հասնում է 45-50 տոկոսի, մինչդեռ հավանություն տվողների թիվը շարունակաբար նվազում է և 2013-2017թթ. հասնում է նվազագույնի՝ մոտ 8 տոկոս:

Նկար 6.




Գործընթացի մակարդակում հետաքրքիր են նաև ընտրություններին վերաբերող հարցումների արդյունքները, որոնք բերված են նկար 7-ում: Հարցվածների մոտ 80% նշում է, որ մասնակցել է վերջին ընտրություններին, սակայն, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների, դրանց մասնակցել է ընտրության իրավունք ունեցողների միայն 60,9% տոկոսը: Ակնհայտ է, որ այս մեծ տարբերությունը կարող էր առաջանալ երկու դեպքում: Կամ հարցմանը համաձայնել են մասնակցել ավելի ակտիվ քաղաքացիները, որոնք նաև ավելի ակտիվ են ընտրությունների ժամանակ, կամ հարցման մասնակիցների մի մասը չի ցանկացել հայտնել, որ ընտրություններին չի մասնակցել:

Նկար 7.



Հետաքրքիր են նաև հաջորդ հարցի պատասխանները, որոնք նույնպես վերաբերում են ընտրություններին: Նկար 8-ում բերված տվյալները ցույց են տալիս հարցվածների կարծիքը, թե արդյո՞ք վերջին ընտրությունները արդար են եղել:

Նկար 8.



Ըստ այդ տվյալների 2008թ. հարցվածների 55 տոկոսից ավելի համարել է, որ դրանք եղել են կամ լիովին արդար, կամ որոշ չափով արդար, 2012թ. խորհրդարանական ընտրություններից հետո նման գնահատական է տվել հարցվածների մոտ 55 տոկոսը, 2013թ. նախագահական ընտրություններից հետո՝ 50 տոկոսից մի փոքր քիչ, իսկ 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո՝ մոտ 45 տոկոսը: Մինչդեռ յուրաքանչյուր ընտրության ավարտից հետո լրատվամիջոցները, քաղաքական ուժերը և դիտորդները հայտնում են ընտրաձայների վաճառքի մասին, ինչպես նաև մատնանշում, որ որոշ կուսակցությունների ներկայացուցիչներ իրենց օգտին քվեարկելու

դիմաց գումար, պարենային մթերքներ, նվերներ կամ այլ ծառայություններ և խոստումներ են առաջարկում կամ տալիս<sup>33</sup>:

Շատ հետխորհրդային երկրների ժողովրդավարական զարգացման խնդիրն այն է, որ հիմնական ինստիտուտները ֆորմալ գոյություն ունեն, սակայն իրականում դրանք թույլ են<sup>34</sup>: Նույնն է իրավիճակը նաև քաղաքական գործընթացների վերաբերյալ, ինչը պարզորոշ արտացոլում են քաղաքացիական մշակույթը բնորոշող գործընթացի մակարդակն արտացոլող նկար7-ը և նկար 8-ը:

## Եզրակացություն

1997-2017թթ. Հայաստանում որոշ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների իրականացրած սոցիոլոգիական ուսումնասիրությունների վերլուծությունը հնարավորություն է տվել պարզել հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում քաղաքական մշակույթի և որոշ քաղաքական գործընթացների հնարավոր կապի մասին վկայող մի քանի օրինակափություններ.

1. Հայաստանում հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում ոչ սահմանադրական մեխանիզմներով տեղի է ունեցել երկու իշխանափոխություն/հեղափոխություն՝ առաջինը 1998թ., երկրորդը՝ 2017թ., որոնց երկու դեպքում էլ նախորդել է իշխանության բարձրագույն մարմինների նկատմամբ անվստահության զգալի մեծացում,

2. Հայաստանում 1997-2017թթ. հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացն, ըստ սոցիոլոգիական հարցումներն

<sup>33</sup> Parlamentswahl in Armenien. 20 Euro für eine Stimme, Online im Internet: URL: [http://www.taz.de/5391968/\\_\[Stand-2018-12-15\]](http://www.taz.de/5391968/_[Stand-2018-12-15]).

<sup>34</sup> Bashkirova Elena, Political Participation in Central and Eastern Europe. Results of the 1999 European Values Surveys, in: Fuchs Dieter, Roller Edeltraud, Weßels Bernhard (Hrsg.), Bürger und Demokratie in Ost und West. Studien zur politischen Kultur und zum politischen Prozess, Wiesbaden 2002, p. 322.

արդյունքների, հստակորեն բաժանվում է երեք փուլերի, որոնք համընկնում են երկրի առաջին երեք նախագահների պաշտոնավարման ժամկետների հետ,

3. Այդ փուլերից երկրորդի մի հատվածի՝ 1998-2003թթ. համար տվյալների բացակայությունն էական ազդեցություն չունի վերլուծության արդյունքների վրա, քանի որ նախորդ փուլի ավարտի՝ 1997թ., և 2004թ. տվյալներն այնպիսին են, որ լիովին ապահովվում է վերլուծության ամբողջականությունն ու հիմնավորվածությունը,

4. 1997-2017թթ. Հայաստանում հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը վկայում է, որ երբ հասարակության անվստահությունը պետական բարձրագույն ինստիտուտների նկատմամբ սկսում է գերազանցել 60 տոկոսը, հասարակության մեջ զգալիորեն նվազում է իրավիճակը սահմանադրական մեխանիզմներով շտկելու հնարավորության նկատմամբ հավատը և իշխանափոխությունը ոչ սահմանադրական մեխանիզմներով դառնում է միանգամայն հնարավոր:

5. Քաղաքական մշակույթի երեք մակարդակների վերաբերյալ ստացված արդյունքները վկայում են, որ եթե կառուցվածքային մակարդակն արտացոլում է հասարակական տրամադրություններն ու բացատրում է արձանագրված զարգացումները, մասնավորապես, իշխանափոխությունների/հեղափոխությունների պատճառներն, ապա մյուս երկու՝ մշակութային և գործընթացային մակարդակների համար արձանագրված տվյալները, որոնք ավելի շուտ վերաբերում են ժողովրդավարական արժեքներին ու սկզբունքներին, վկայում են ժողովրդավարացման գործընթացի լուրջ թերությունների մասին:

6. Նախորդ կետերի եզրակացության իրավացիությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի մյուս երկրների համար ճշտելու նպատակով անհրաժեշտ են համապատասխան տվյալներ և վերլուծություն այդ երկրների համար: Ընդ որում, կարևոր է, որ հարցումներն իրականացրած լինեն արժանահավատ ուսումնասի-

րությունների մեթոդաբանություն և փորձ ունեցող կազմակերպություններ:

7. Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վերաբերյալ նման ուսումնասիրության իրականացման կարևորությունը պայմանավորված է ոչ միայն տեղի ունեցած իրադարձությունների տրամաբանության բացահայտման անհրաժեշտությամբ, այլև հետագա զարգացումների կանխատեսման ու անցանկալի զարգացումների կանխատեսման հնարավորություն-ներով:

## **Peculiarities of Political Culture in Post-Soviet Transformation States: The Case of Armenia**

TIGRAN TOROSYAN

*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

NANE KHACHATRYAN

*Halle University, Germany*

*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

The article discusses the possibility of forecasting some political processes through the data obtained from sociological surveys conducted by the reputable organizations in Armenia during the post-Soviet transformation. The analysis of the data shows that during the post-Soviet transformation one can distinguish between three stages of significant changes in political culture, that coincide with the period of office of the first three presidents. The skepticism over the higher authorities in the first and third stages deepened in such an extent that it has led to a change of power by non-constitutional mechanisms (revolution). Though the term of the second president was favorable for “color revolutions”, this did not take place in Armenia due to a significant difference of trust between the preceding and following stages. The analysis demonstrates that although the post-Soviet transformation has duration of less than three decades and there could be no talk of political culture in Soviet times, its nature is not static, as is sometimes considered. The results also prove that although public trust has drastically changed in some stages, changes in social consciousness during this period are taking place at a very slow pace.